

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍՈՆԱ ԱՐԱՅԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՐԱՐԵՐԵՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ԱՆՏԻՈՔԻ ՀԱՅԵՐԵՆ ԽՈՍՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Ժ.02.01. «Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2016

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտում

Գիտական ղեկավար՝
թեկնածու,

բանասիրական գիտությունների

դոցենտ Ս. Բ. Կարաբեկյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

թեկնածու,

բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Գ. Կ. Խաչատրյան

բանասիրական գիտությունների

դոցենտ Գ. Կ. Հանանյան

Առաջատար կազմակերպություն՝

Խ. Աբովյանի անվ. հայկական պետական
մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2016թ. մարտի 7-ին՝ ժամը 15⁰⁰-ին,
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ-ի՝
Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդում:
Հասցեն՝ 0015, Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2016թ. փետրվարի 5-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ

Ն. Մ. Սիմոնյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Աշխատանքում առաջադրվող ընդհանուր հարցադրումներ

Հայերենի բարբառային միավորները նկարագրելիս հեղինակներն ուշադրություն են դարձրել նաև դրանցում առկա օտար ազդեցություններին: Սակայն նրանց հետաքրքրությունը հիմնականում սահմանափակվել է իրենց աշխատությունների հավելվածների բառացանկերում ընդգրկելով օտար փոխառություններ: Որոշ հետազոտություններում ներկայացվել են բարբառային տվյալ համակարգի տարբեր մակարդակներում առկա օտար ազդեցություններ: Բայց այդ ամենն արվել է ուսումնասիրվող բարբառի կամ խոսվածքի գրանցման պահին ստացված պատկերն ամբողջացնելու նպատակով:

Հայերենի բարբառներում օտար լեզուների այս կամ այն տիպի ներթափանցումներին նվիրված համակողմանի ուսումնասիրություններ չեն կատարվել հավանաբար մեկ հիմնական պատճառով. 19-րդ դարի վերջերից սկզբնավորված հայ բարբառագիտության հիմնական նպատակը հայերենի բազմաթիվ տարածքային տարբերակների հայտնաբերումը և գիտական նկարագրությամբ դրանք կորստից փրկելն էր:

Հայերենի տարածքային տարբերակներում այլ լեզուներից կատարված փոխառությունների համապարփակ քննությունը, սակայն, կարևոր է մի քանի առումով: Նախ՝ օտար ազդեցությունների տիպաբանական, պատմական, հանրալեզվաբանական և այլ մեթոդներով ուսումնասիրությունները լրացնում կամ ճշգրտում են փոխատու և փոխառու լեզուների (բարբառների) համապատասխան բնագավառների վերաբերյալ ընդունված գիտական մոտեցումները: Դրանք նաև օգնում են բացահայտելու, օրինակ, հայերենի տվյալ տարածքային տարբերակի պատմական զարգացման փուլերի ժամանակագրական հաջորդականությունը, օտար ազդեցություններով պայմանավորված փոփոխությունների ընթացքն ու նոր առաջացած յուրահատկությունները համակարգի տարբեր մակարդակներում: Միևնույն ժամանակ, ինչպես հայտնի է, երկու տարբեր ազգերի լեզվական իրողությունների զուգադրում-համեմատումից ստացվող արդյունքները հանրալեզվաբանության տեսանկյունից դիտարկելու դեպքում կարող են բացահայտել այդ ժողովուրդների պատմական կապերի, շփումների, նրանց մշակութային, հասարակական կյանքի ձևերի, կենցաղի և այլնի անհայտ կամ քիչ հայտնի փաստեր:

Աշխատանքում ուսումնասիրվել են արաբերենի՝ լեզվի տարբեր մակարդակներին բնորոշ ներթափանցումները հայերենի բարբառների արևմտյան խմբակցության Անտիոքի կամ ծայրհարավարևմտյան

բարբառախմբում¹: Ըստ բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման՝ նշված բարբառախմբի մեջ ներառված են Քեսաբ-Սվեդիայի բարբառը՝ Քեսաբի, Քարուսիեի, Յողուն-Օլուկի, Հաջի-Հաբիբլիի, Արամոյի խոսվածքներով, և Բեյլանի բարբառը: Բարբառային այս միավորները պատմական Ասորիքի (Սիրիայի) Անտիոք նահանգում (այսօր՝ Թուրքիային պատկանող) և Սիրիայի Քեսաբ քաղաքավանում ու շրջակա բնակավայրերում 20-րդ դարում արձանագրված և գիտականորեն նկարագրված հայերենի տարածքային տարբերակներն են: Ավելի վաղ դրանց գիտական նկարագրություն, նաև դրանցում օտար փոխառությունների վերաբերյալ տեղեկություններ գրեթե չեն հանդիպում:

Հայերենի վերոհիշյալ տարածքային տարբերակներում առկա արաբերենի ներթափանցումներն ուսումնասիրելու համար հիմք են ընդունվել Հ. Աճառյանի, Հ. Չոլաքյանի, Ա. Փաշայանի, Տ. Անդրեասյանի, Գ. Հանանյանի, Ա.Տ. Ինճեճիքյանի, Պ. և Կ. Մախշիկյանների, Հ. Քյուլիեյանի բարբառային հետազոտությունների, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում առկա համապատասխան բարբառային ձեռագիր նյութերի մատուցած փաստերը:

Փոխառությունները հանրալեզվաբանական մոտեցմամբ դիտարկելու համար օգտակար են եղել Ու. Վայնրայխի, Ռ. Բելլի, Վ. Շագալի և այլ հեղինակների ուսումնասիրությունները:

Արենախոսության թեմայի արդիականությունը

Հայերենի բարբառային միավորների համակողմանի հետազոտությունը ոչ միայն հայ լեզվաբանության, այլև ընդհանուր հայագիտության արդիական և կարևոր խնդիրներից է:

Հայերենի բարբառների արևմտյան խմբակցության Անտիոքի կամ ծայրհարավարևմտյան բարբառախմբում ևս օտար լեզուների, այդ թվում նաև արաբերենի ազդեցություններին նվիրված համապարփակ հետազոտություններ չեն կատարվել: Մինչդեռ բարբառախոս հայկական այս համայնքը հնագույններից մեկն է, որը դարերի ընթացքում սերտ շփումներ է ունեցել տարբեր լեզուներ (արաբերեն, թուրքերեն, ավելի ուշ՝ ֆրանսերեն, անգլերեն և այլն) կրող ժողովուրդների հետ: Տարածաշրջանում վերջինների՝ պատմականորեն ձևավորված գերակա դիրքով և այդ շփումների տևականությամբ պայմանավորված՝ տեղի հայերեն բարբառներ են թափանցել

¹ Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 132:

լեզվական օտար իրողություններ. դրանցում բավական շատ են արաբականները:

Արենախոսության նպատակն ու խնդիրները

Ատենախոսության նպատակն է համաժամանակյա մոտեցմամբ համակարգային քննության ենթարկել արաբերենի ազդեցության դրսևորումներն Անտիոքի հայերեն բարբառային միավորներում:

Այդ նպատակի համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

ա) ներկայացնել Անտիոքի բարբառախմբի հայերեն խոսվածքներում փոխառությունների միջոցով արաբերենի հնչյունական համակարգի արտացոլումը՝ ի հայտ բերելով ծայնավորական և բաղաձայնական ենթահամակարգերի արտահայտման առանձնահատկությունները,

բ) կատարել արաբերենից փոխառված բառերի ձևաիմաստային քննություն,

գ) դասակարգել արաբերենից փոխառյալ բառերն ըստ իմաստային-թեմատիկ խմբերի, դիտարկել դրանք հանրալեզվաբանության տեսանկյունից:

Արենախոսության գիտական նորույթը

Աշխատանքում հավաքվել և գիտական նոր տառադարձմամբ ներկայացվել են բարբառային մի շարք ուսումնասիրություններում գրանցված, արաբերենից կատարված փոխառությունների բարբառային ձևերը (ավելի քան չորս հարյուր բառային միավոր), ճանաչվել են դրանց գրական արաբերեն համարժեքները:

Առաջին անգամ համապարփակ քննության են ենթարկվել արաբերենի ազդեցության դրսևորումները հայերենի վերոնշյալ բարբառային միավորներում, վերհանվել արաբերենից կատարված փոխառությունների հնչյունական, խոսքիմասային, բառակազմական և բառիմաստային առանձնահատկությունները: Փոխառյալ բառային միավորները ենթարկվել են դասակարգման, տրվել են դրանց հասկացական արժեքները:

Արենախոսության տեսական և գործնական նշանակությունը

Ատենախոսության հիմնական դրույթները և հետազոտական մեթոդները կարող են նպաստել օտար լեզուներից հայերենի բարբառներ ներթափանցած լեզվական իրողությունների վերաբերյալ համակողմանի ուսումնասիրությունների կատարմանը:

Աշխատանքը կարող է օգտակար լինել ոչ միայն հայերենագիտության, այլև հայագիտության համար ընդհանրապես՝ օգնելով բացահայտելու հարևան ժողովուրդների հետ ունեցած ոչ միայն լեզվական, այլ նաև պատմամշակութային, հասարակական առնչությունները:

Արենախոսության մեթոդաբանական հիմքը

Որպես հետազոտության հիմնական մեթոդ՝ աշխատանքում օգտագործվել է լեզվաբանական հետազոտությունների զուգահրակա-տիպաբանական մեթոդը:

Արենախոսության փորձաքննությունը

Ատենախոսության հիմնադրույթները ներկայացվել են «Ջահուկյանական ընթերցումներ» խորագրով գիտաժողովում, Երիտասարդ լեզվաբանների հանրապետական գիտաժողովում, ինչպես նաև հայ բարբառագիտությանը նվիրված միջազգային գիտաժողովում:

Ատենախոսությունը քննարկվել է ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնում և երաշխավորվել պաշտպանության:

Արենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, համառոտագրությունների և օգտագործված գրականության ցանկերից ու հավելվածից:

Ներածության մեջ շարադրվում են աշխատանքում առաջադրվող ընդհանուր հարցադրումները, ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը, տրվում են հայ-սիրիական պատմական փոխհարաբերությունների և հայ-արաբական լեզվական առնչությունների վերաբերյալ համառոտ ակնարկներ, ներկայացվում են Անտիոքի բարբառախմբի բարբառային միավորների հիմնական հատկանիշները, ինչպես նաև հաղորդվում են ընդհանուր տեղեկություններ արաբերենի վերաբերյալ:

Ներածության մեջ ներկայացվում են նաև ուսումնասիրվող նյութի աղբյուրները, աշխատանքում կիրառվող բարբառային և արաբերեն բառերի տառադարձման համապատասխան համակարգերը:

Ատենախոսության **առաջին գլուխը** (Արաբերենի հնչյունական համակարգի արտացոլումը Անտիոքի հայերեն խոսվածքներում) բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում համակողմանիորեն և մանրամասն ուսումնասիրվել է փոխառությունների միջոցով արաբերենի բաղաձայնական ենթահամակարգի դրսևորումն Անտիոքի հայերեն խոսվածքներում:

Գրական արաբերենը բնութագրվում է բաղաձայնների, հատկապես՝ կոկորդային, միջատամային և ուժգին արտաբերման (էմֆատիկ), զարգացած համակարգով:

Խնդրո առարկա հայերեն բարբառային միավորների բաղաձայնական ենթահամակարգերը հին հայերենի՝ գրաբարի համեմատությամբ բնորոշվում են հպականների տեղաշարժ-տեղափոխությամբ, այսինքն՝ ձայնեղ հպականների և կիսաշփականների խլացմամբ և համապատասխան խուլերի ձայնեղացմամբ: Արաբական փոխառություններն Անտիոքի տարածքային տարբերակներում, ինչպես մեր ուսումնասիրությունն է ցույց տալիս, հիմնականում կատարվել են հպական բաղաձայնների նշված տեղաշարժ-տեղափոխությունից հետո: Այդ է պատճառը, որ արաբերենի հպական բաղաձայնները ձայնաբանական հատկանիշներով արտահայտված են գրեթե նույնությամբ՝ ձայնեղ, խուլ, շնչեղ խուլ: Արաբերենի բաղաձայնների արտահայտման առանձնահատկությունները կարելի է դասակարգել հետևյալ սկզբունքով.

1. Հայերենի բարբառային միավորների և արաբերենի բաղաձայնների մի մասը, եթե անգամ հնչարտաբերական հատկանիշներով չեն նույնանում, այդուհանդերձ, միմյանց մոտ գծեր են ցուցաբերում: Հետևաբար՝ արաբերենի բաղաձայնները, փոխառություններում իրենց հատկություններով նմանվելով Անտիոքի բարբառախմբի համապատասխան հնչյուններին, նույն կերպ են արտացոլվել և ունեն միևնույն գործառնությունները: Դրանք են.

ա) b, d ձայնեղ և t, k խուլ հպականները. *բ՝դ՝վի* «բեղվին» - badawÊ, *ինորբուն* «մատաղ» - qurbşn, *դին* «կրոն» - dÊn «հավատ, կրոն», *թ՝նբ՝օհ* «զգուշացում» - tanbÊh, *մ՝քթուբ* «նամակ» - «1.գրված, 2.գրություն, ուղերձ» - maktâb և այլն:

բ) z, s, à, Ç, x, f, h շփականները և j կիսաշփականը. *ը՝օզ* «բրինձ» - "urz, *սըր* «գաղտնիք» - sir, *շահադ* «վկա» - àşhid, *մասխարու* «ծաղրածո» - masxara «1.ծաղրի առարկա, 2.դիմակ», *ֆ՝լ՝ք* «ճակատագիր» - falak «1.երկինք, 2.ուղեծիր», *հօջօմ* «հարձակում» - hujâm, *իլաջ* «ղեղ» - #ilj:

գ) m, n, l, y ձայնորդները. *մին* «նավահանգիստ» - mÊn\$, *բինա* «շենք» - bin\$, *ք՝լբ* «շուն» - kalb, *յարաբ* «ո՛վ Աստված» - yş rabb և այլն:

Արաբերենի թրթռուն r ձայնորդն արտաբերությամբ մոտ է հայերենի թրթռուն r-ին: Անտիոքի բարբառային միավորներում, սակայն, այն

հիմնականում փոխարինվել է *ր*-ով. *րէսմի* «պաշտոնական» - rasmÊ «պաշտոնական, օրինական», *Օաբըր* «գերեզման» - qabr, *Օամար* «լուսին» - qamar, *ջորաբ* «գուլպա» - jaurab և այլն: Հանդիպում են նաև *ր-ի՝ ը* ձայնավորային հենարանով գործածվող բառեր. *ը՝օզը* «բրինձ» - "urz, *ըրօբ* «քառորդ» - rub#, *ը՝օբը* «ռուպ» - rubb «մրգահյույօթ, մուրաբա» և այլն: Իսկ երկշրթնային *w* ձայնորդը փոխարինվել է շրթնատամնային *վ* բաղաձայնով. *վաՀա-բիՀա* «իրավ որ, Աստված վկա» - wa"allah bi"allah, *բ՛դ՛վի* «բեղվին» - badawÊ, *հավըը* «բակ» - Èawuà և այլն:

2. Արաբերենի բաղաձայնական ենթահամակարգը, Անտիոքի բարբառախմբի համապատասխան ենթահամակարգի հետ ընդհանրություններ ցուցաբերելով հանդերձ, ունի նաև հնչարտաբերական որոշ յուրահատկություններով առանձնացող հնչյուններ, որոնք հաճախ նույնպես նույնացել են հայերենի քննվող տարածքային տարբերակների՝ այս կամ այն հատկանիշով իրենց նմանվող հնչյուններին: Դրանք են՝

ա) Ձայնեղ *յ* և խուլ ² շփականները. առաջինը փոխարինվել է *զ*-ով՝ *զ՞ն* «մոլայի աղոթք» - "aḫṣn «աղոթքի կանչ, կոչ», իսկ երկրորդը՝ բառակզբում և բառավերջում՝ բաղաձայնից հետո, *թ-ով թ՛օյթ* «մեկ երրորդ» - ²ul², իսկ միջձայնավորային դիրքում և բառավերջում՝ ձայնավորից հետո՝ *ս*-ով. *մ՞ս՞լ* «1.օրինակ, 2.առակ, զրույց» - ma²al, «1.օրինակ, 2.ասացվածք, առակ», *մ՞ր՞ս* «ժառանգություն» - mirṣ² և այլն:

բ) Խոչակային խուլ *È* շփականը հիմնականում փոխարինվել է հայերենի կոկորդային *հ* խուլ շփականով. *հ՞օլ* «իրավունք» - Èaqq, *մ՞շլ՞հ* «ողջ մարմինը ծածկող արաբական վերարկու» - muàlaÈ «թիկնոց, վերարկու» և այլն: Բառամիջում և բառավերջում *È-ն* մի քանի բառում համապատասխանում է *խ*-ին. *մ՞խբ՞մու* «դատարան» - maÈkama: Ուշագրավ է, որ առավել մեծ թիվ են կազմում *È* հնչյությով փոխառյալ բառերը, մինչդեռ *հ* հնչյությով, որն արտաբերական հատկանիշներով հայերենի *հ-ին* ավելի մոտ է, փոխառությունները բավական սակավաթիվ են:

գ) Արաբերենի՝ ուժգին արտաբերման («էմֆատիկ») *·, à, î, ß* բաղաձայների շարքն արտահայտվել է հետևյալ կերպ.

Ձայնեղ *·* հպականը բառակզբում ձայնավորից առաջ և միջձայնավորային դիրքերում համապատասխանում է *դ-ին*. *դաղըթ* «ճնշում» - ·aḩā «1.ճնշում, 2.սեղմում», *իաղա* «դատավոր» - qṣ-in և այլն, իսկ բաղաձայնից առաջ համապատասխանում է *զ-ին*. *հ՞զմ* «մարտողություն» - ha·m:

Խուլ *à* հպականը փոխառյալ բառերում հիմնականում վերածվել է շնչեղ խուլ *թ* հպականի. *բարթել* «կաշառք» - barāÈl, *իֆթար* «նախաճաշ» - ifāṣr և այլն:

Ձայնեղ *î* շփականը հանդիպում է միայն բառամիջում, այն էլ՝ մի քանի բառում և արտասանությամբ պարզեցվելով՝ նույնացել է հայերենի *զ-ին*. *նազար* «նայվածք» - naîar «1.տեսողություն, 2.հայացք» և այլն:

Խույ Բ շփականը նույնացել է հայերենի *ս*-ին. *սահի* «իրավ» - BaÈÈÈ և այլն:

3. Արաբերենում գործառում են նաև *q* (կաֆ), " (համգա) և # (այն) բաղաձայնները, որոնք հայերենին խորթ են իրենց հնչարտաբերական գրեթե բոլոր հատկանիշներով:

Ուշագրավ է, սակայն, որ խոր հետքիմքային, խույ հպական *q* բաղաձայնը փոխառությունների միջոցով հնչարտաբերական համարյա նույն հատկանիշներով աստիճանաբար անցել է Անտիոքի բարբառային միավորներին. *Օամար* «լուսին» - qamar, *ինթիամ* «վրեժ» - intiḡsm և այլն: Օտար այս հնչյունը, ամրանալով Անտիոքի հայերեն բարբառախմբի հնչյունական համակարգերում, սկսել է ի հայտ գալ նաև հայերեն բառերում, թեև հնչութային արժեք չունի. *աիրով* «ագռավ», *ձուրփ* «գորտ», *կըլօխ/ձըլօխ* «գլուխ» և այլն:

Խոչակային խույ հպական "-ն Անտիոքի բարբառախմբի փոխառություններում չի պահպանվել. *ուսուլ* «կանոն, կարգ» - "uḡāl: Կոկորդային ձայնեղ շփական # -ը Քեսաբի խոսվածքում պահպանվել է միայն բառամիջում. *մաՕդու* «ստամոքս» - ma#ida, իսկ Սվեդիայի խոսվածքում առկա է # >ղ հնչյունափոխություն. *ս°ղթ* «ժամ, ժամացույց» - sḡ#a և այլն:

4. Արաբերենի բաղաձայնական համակարգում գործառվող, բաղաձայնների կրկնությամբ արտահայտվող հնչյունները արաբերենից կատարված փոխառյալ բառերում մնում են որպես այդպիսիք, քանի որ հայերենի տարածքային այս տարբերակներին նույնպես (հենց արաբերենի ազդեցությամբ) հատուկ է բաղաձայնների տևական արտասանությունը: Այսպես՝ *ձու՞նու* «գմբեթ» - qubba, *մը×* «լեղի, դառնություն» - murr «դառը, լեղի, դառնահամ», *ղը×* «օդի ճնշիչ՝ տաք լինելը» - ḡamm «հեղձուցիչ օդ» և այլն: Մի շարք բառերում, սակայն, բաղաձայնների տևականությունը չի պահպանվել. *յարաբ* «ո՛վ Աստված» - yḡ rabb: Այսինքն՝ տևական բաղաձայնների նույնությամբ արտահայտումը կամ դրա բացակայությունը արաբերենից կատարված փոխառություններում համակարգային և հետևողական բնույթ չեն կրում:

Անտիոքի հայերեն բարբառախմբի խոսվածքների՝ արաբերենից կատարված փոխառյալ բառերում ձայնավորների կրած հնչյունափոխությունները, ի տարբերություն բաղաձայնների, որոնք, ինչպես վերը նշվեց, ավելի շատ ընդհանրություններ են ցուցաբերում փոխատու լեզվի բաղաձայնական ենթահամակարգի հետ, տարաբնույթ են: Այստեղ ի հայտ են գալիս բազմազան յուրահատկություններ, որոնք, սակայն, հաճախ միևնույն հետևողականությամբ չեն արտահայտվում:

Գրական արաբերենի ձայնավորները երեքն են՝ կարճ և երկար տարբերակներով՝ a, i, u, ḡ, È, à: Գրական արաբերենն ունի նաև երկու իջնող երկբարբառներ՝ aw և ay: Ի տարբերություն գրական լեզվի՝ արաբերենի տարածքային տարբերակների ձայնավորային ենթահամակարգերն աչքի են ընկնում իրենց բազմազանությամբ. դրանցում գործառում են նաև կարճ o և

երկար \ddot{u} , կարճ e և երկար z ձայնավորները, \ddot{A} կարճ ձայնավորը, ինչպես նաև u : բարձրացող երկբարբառը:

Արաբերենից փոխառյալ բառերում ձայնավորների դրսևորման ձևերը հայերենի հիշյալ տարածքային տարբերակներում կարելի է խմբավորել որոշ ընդհանուր հատկանիշներով.

Արաբերենի ձայնավորները վերոնշյալ բարբառային միավորներում հնչյունափոխության չեն ենթարկվել. կարճ a , u , i ձայնավորները մի շարք փոխառություններում արտացոլվել են որպես այդպիսիք, ինչպես՝ *դարբա* «հարված» - $\cdot arba$, *խումար* «բախտախաղ» - $xum\dot{s}r$, *բինա* «շենք» - $bin\dot{s}$ և այլն: Երկար \dot{s} , \dot{E} , \dot{a} ձայնավորները վերածվել են կարճերի, քանի որ այս բարբառախումբը երկար ձայնավորներ գրեթե չունի. *մալ* «ունեցվածք» - $m\dot{s}l$, *մահրում* «գուրկ, զրկված» - $ma\dot{E}r\dot{a}m$, *թախթիդ* «հատակագծում» - $tax\dot{a}\dot{E}\dot{a}$ և այլն:

Փոխառություններում ձայնավորների կրած հնչյունափոխությունները հիմնականում պայմանավորված են հետևյալ հանգամանքներով.

1. Ժամանակակից արաբերենին բնորոշ է մի շարք այսպես կոչված՝ «փափուկ» բաղաձայնների (b , d , s , z , t , f , m , n) ազդեցությամբ a -ի կարճ և երկար տարբերակների քմային արտաբերությունը՝ \ddot{a} , անգամ որակի փոփոխությամբ՝ e կամ i ձայնավորների վերածվելը: Անտիոքի բարբառախմբի՝ արաբերենից կատարված փոխառություններում արձանագրված են այդպիսի բառերի արդեն հնչյունափոխված ձևերը: Օր.՝ *բ՞շի՞ծ* «բազե» - $b\dot{s}\dot{a}iq$, *դ՞րս* «դաս» - $dars$, *բ՞դ՞վի* «բեդվին» - $badaw\dot{E}$ և այլն:

Արաբերենում կարճ a -ն և երկար \dot{s} -ն չեն քմայնանում բառում կոշտ, ուժգին արտաբերման բաղաձայնների (\cdot , \ddot{a} , \dot{i} , β) առկայության դեպքում, քանի որ վերջիններն ունեն ցածր տոնայնությամբ արտասանություն: Դա արտացոլված է նաև փոխառություններում, ինչպես՝ *դարբա* «հարված» - $\cdot arba$, *թախթիդ* «հատակագծում»- $tax\dot{a}\dot{E}\dot{a}$ և այլն:

2. Արաբերենի i ձայնավորն էմֆատիկ և մի շարք այլ բաղաձայնների ազդեցությամբ հաճախ արտասանվում է ռուսերենի \ddot{u} ձայնավորի պես: Բավական թվով փոխառություններում այն հանդես է գալիս հնչյունափոխված ձևով՝ i , \dot{E} > \ddot{u} . *թասդըլ* «1.փաստ, 2.փաստացի» - $ta\dot{s}d\dot{E}q$ «1.հավատ, 2.հաստատում, 3.վավերացում», *մալըբ* «կաղապար» - $q\dot{s}lib$, *մըզրալ* «նիզակ» - $miz\dot{s}q$ «նիզակ, տեգ», *ֆըլըջ* «կաթված» - $f\dot{s}lij$ և այլն:

3. u -ի հնչյունափոխությունն արտահայտվում է հիմնականում քմայնացմամբ՝ u, \dot{a} > \ddot{u} . *մօլք* «ունեցվածք» - $mulk$, *քօրսա* «աթոռ» - $kurs\dot{E}$, *ջօմլա* «ամբողջը, բոլորը» - $jumla$ և այլն:

Սրանք հիմնականում այն դեպքերն են, երբ արաբերեն փոխառյալ բառերը Անտիոքի տարածքային տարբերակներ են թափանցել մայրենի լեզվի՝ արաբերենի, պատմական հնչյունափոխությամբ ձևափոխված տեսքով: Սակայն կան նաև այնպիսիք, որոնք ենթարկվել են հայերեն բարբառներում գործող

հնչյունական օրենքներին: Դրանցից արաբերենից կատարված փոխառություններում ամենից ավելի ցայտուն դրսևորում ունի Անտիոքի խոսվածքներին բնորոշ հիմնական օրինաչափությունը՝ բառում շեշտի հետ կապված հնչյունափոխությունը. շեշտի ազդեցությամբ տեղի է ունենում պարզ ձայնավորի երկբարբառացում (օր.՝ *ḍʾon* < *ḍan*, *ḡon* < *ḡin* և այլն): Այն առկա է նաև արաբերենից փոխառված բառերում. *a*, § > ^ho - *hʾolʾoq* «օղակ» - Èalaq, *juʾpʾor* «լուր» - xabar, *i*, È > ^hé - *pʾhʾéʾu* «սեխ» - baāāÈx "aBfar, *hʾhʾér* «պատրաստ» - Èṣ-ir, *u*, ā > ^hni - *ṣʾoʾlṣ* «մեկ երրորդ» - ²ul², *qʾhʾu* «շերամ պահելու գետնահարկ շինություն» - kâx «խրճիթ», ā > ^hu^h - *ṣawrʾuʾ* «զվխանոց» - āarbâā «Ֆես» և այլն:

Ատենախոսության **երկրորդ գլուխը** (Անտիոքի հայերեն խոսվածքներում արաբերենից կատարված փոխառությունների ձևափոխության քննություն) բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում (Փոխառությունների խոսքիմասային դրսևորման առանձնահատկությունները) տրվում են Անտիոքի հայերեն բարբառային միավորների և արաբերենի խոսքիմասային առանձնահատկությունների տիպաբանական վերլուծությունը և փոխառյալ բառապաշարի խոսքիմասային հիմնական դրսևորումները:

Հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող լեզուներում խոսքի մասերը, որոշ տարբերություններով հանդերձ, բաժանվում են տասը խմբի: Մինչդեռ սեմական լեզուներին, այդ թվում նաև արաբերենին, որոնք ունեն սկզբունքորեն այլ լեզվամտածողությամբ ձևավորված քերականական կառուցվածք, հատուկ է բառերի խոսքիմասային եռախումբ դասակարգումը՝ *անուն*, *բայ* և *մասնիկ*: Անվանական միավորները ենթարկվել են նաև ներխոսքիմասային դասակարգման՝ տարբերակելով գոյականի, ածականի, թվականի և դերանվան ենթահամակարգերը:

Փոխառությունների մեջ խոսքիմասային ամենամեծ խումբը գոյականներն են, որոնք ենթարկվում են խոսվածքներին հատուկ թեքման օրինաչափություններին (այսպես՝ *ինա/ընա* հոգնակերտ են ստանում *ա/ու* վերջահանգ ունեցող փոխառյալ բոլոր բառերը: Օր.՝ *խարաբու* «ավերակ» - *խարաբինա*, իսկ - *նա/նի* հոգնակերտ ստանում են բաղաձայնահանգ փոխառյալ բառերի մեծ մասը, օր.՝ *մուխարա* «գյուղապետ» - *մուխարնա* և այլն):

Անտիոքի հայերեն բարբառային միավորներում գործածվող ոչ մեծաքանակ ածականների զգալի մասը որակական են: Օր.՝ *ջʾunor* «քաջ, խիզախ» - *jasâr*, *մʾշhonor* «հայտնի, անվանի» - *maâhâr* և այլն:

Թվականական ձևերից արաբերենից փոխառված բառապաշարում արձանագրված է *ṣʾoʾlṣ/ṣʾoʾlṣ* «մեկ երրորդ» - ²ul² կոտորակային թվականը:

Ուշագրավ է, որ, թեկուզ երկու բառաձևով, արաբերենից կատարված փոխառություններում ներկայացված են լեզուներում սակավ փոխառվող քերականական - բառային միավորները՝ դերանունները: Դրանք են՝ *ղեր/ղոր*

«ուրիշ, այլ» - Çayr «1.ուրիշ, 2.բացի» և *Ֆըլուն/Ֆըլան* «այսինչ, ոմն» - fulɬn անորոշ դերանունները:

Խնդրո առարկա խոսվածքներում գոյականից հետո փոխառյալ մյուս մեծ բառախումբը բայն է: Բայերն իրենց կազմությամբ հիմնականում պարզ են և ստեղծվել են արաբերենի գոյական (հիմնական ձևույթ) + հայերենի անորոշ դերբայի *-իլ* վերջավորություն (երկրորդական ձևույթ) կաղապարով. *մուհըրիլ* «կնքել» - muhr (կնիք), *հաբիլի* «պարանով կապկպել» - Èabl (պարան), *հիսաբիլ* «հաշվել» - Èisɬb (հաշիվ), *բարթըլիլ* «կաշատել» - barãÈl (կաշառք) և այլն:

Փոխառյալ բայերի մի խումբ էլ համապատասխան իմաստներն արտահայտում է նկարագրական եղանակով՝ հիմնականում հարադրավոր կազմությամբ: Որպես նշված բարդությունների հարադիրներ՝ մեծ մասամբ հանդես են գալիս արաբերենից փոխառյալ գոյականներ: Օր.՝ *հօզմ ինիլ (ինիլ < անետ)* «մարսել» - ha·m (մարսողություն), *իֆթարի ինիլ* «նախաճաշել» - ifãʂr (նախաճաշ), *ջօհթ ինիլ (ինիլ < անետ)* «ճիգ թափել» - jahd (ճիգ, ջանք) և այլն:

Անտիոքի բարբառախմբի տարածքային տարբերակներում գործածվում են նաև սակավաթիվ երկրորդական խոսքի մասեր, որոնք արաբական լեզվամտածողության խոսքիմասային դասակարգմամբ ընդգրկվում են *մասնիկ* խմբի մեջ: Օր.՝ *թծմ* «ամբողջովին» - tʂmm «ամբողջական, ավարտուն» (մակբայ), *բօղլ* «փոխարեն» - badal (կապ), *ֆաւաղ* «սակայն, բայց» - faqad (շաղկապ), *վաՇա* - wa" allah «Աստված վկա» (ձայնարկություն), *տաբի* «անշուշտ» - aab#a" «անկասկած, բնականաբար», *վաՇա/վաՇահի* «իրավ որ, ճշմարիտ, Աստված վկա» - wa" allah, *ջօբօ* «արդյոք» - #ajaba" «զարմանալի է», *իշաՇա/իշաՇահ* «երանի» - "in àʂ" "allah «եթե Տերը կամենա, Աստծու կամոք» (վերաբերականներ) և այլն:

Երկրորդ ենթազբխում (Փոխառությունների բառակազմական արտահայտման ձևերը) տիպաբանական-զուգադրական մեթոդի կիրառմամբ ներկայացվում են արաբերենի և հայերենի (բարբառների) բառակազմական հիմնական օրինակափոխությունները:

Հայերենը հիմնականում կցական, իսկ արաբերենը՝ թեքական լեզու է: Այսինքն՝ և՛ ձևաբանական, և՛ բառակազմական թեքույթները հայերենում մեծ մասամբ կցվում են բառահիմքին: Մինչդեռ արաբերենում ձևաբանական և բառակազմական միջոցներ են համարվում ձայնավորները՝ բառում իրենց կազմության և դասավորության փոփոխությամբ, այսինքն՝ ներքին թեքմամբ, ածանցները և արմատի որևէ բաղաձայն հնչյունի կրկնությունը: Հաճախ երկու կամ երեք միջոցներն օգտագործվում են միաժամանակ:

Բառարմատների կառուցվածքային յուրահատկությունների առումով ևս արաբերենը և հայերենը սկզբունքորեն տարբեր են. առաջինը բաղաձայնական, իսկ երկրորդը՝ վանկային կամ բաղաձայնաձայնավորային տիպի լեզու է²:

² Джаукян Г., *Универсальная теория языка*, Е., 1999, ст. 106.

Արաբերենի բառարմատը բաղաձայն հնչյուններից բաղկացած, այլևս անբաժանելի միավոր է, իսկ ձայնավորները բնորոշում են բառի քերականական ձևը և ինքնին կամ տարբեր ածանցների համակցմամբ արտահայտում են բառակազմական և բառափոխական իմաստներ: Ինչ վերաբերում է հայերենին, ապա այստեղ ձայնավորն ինքնուրույն կամ բաղաձայնի համադրությամբ արմատի իմաստի կրողն է:

Հիմք ընդունելով երկու լեզուների (արաբերենի և հայերեն բարբառի) տիպաբանական բնութագրերը՝ մեր կողմից ուսումնասիրվող նյութի վերաբերյալ կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական դրույթները.

1. Անտիոքի հայերեն տարածքային տարբերակներն արաբերենից բառարմատներ՝ որպես այդպիսիք, չէին կարող փոխառել. դրանք բառեր են (ածանցավոր), որոնք, սակայն, հայերենի բարբառային միավորներում ընկալվում և գործառվում են որպես արմատներ կամ արմատական բառեր. Օր.՝ *բինա* «շենք» - binš", *դին* «կրոն» - dĕn «հավատ, կրոն», *Օաբըր* «գերեզման» - qabr, *Օամար* «լուսին» - qamar, *ք°լք* «շուն» - kalb, *մին°* «նավահանգիստ» - mĕnš" և այլն:

2. Մինչև անգամ եթե արաբերեն բառն Անտիոքի հայերեն բարբառային միավորներ է ներթափանցում խոսքի շղթայում ձեռք բերած ձևաբանական տարբեր արտահայտություններով (հոգնակի թիվ, հոլովված ձև), փոխառու լեզվում ընկալվում և գործառվում է որպես ուղիղ բառաձև՝ արմատ: Այսպես՝ առանձին դեպքերում արաբերենի հոգնակի թվով բառաձևերն ընկալվում են որպես եզակի թվով բառեր: Օր.՝ *հուպըպ* «սահման», ծագում է արաբերենի ĕudād «սահմաններ» ձևից, եզ. թ.՝ ĕadd, *Ղըրօշ* «դրուշ, դրամի տեսակ» - qurāā (դրամներ), եզ. թ.՝ qirā, *յ°էէր* «գերի» - yasĕr (գերիներ, ստրուկներ), եզ. թ.՝ "asĕr և այլն:

3. Արաբական փոխառությունների մի մասը ժամանակի ընթացքում հիմնական բառապաշարի մեջ է մտել և բառակազմական այնպիսի կառույցներ է ձևավորում, ինչպես և բնիկ բառերը: Մասնավորապես, որպես արդեն ամրագրված ձևեր, բառաձանցման եղանակով կերտվել են մի շարք նոր բառեր, որոնք ձևավորվել են փոխառյալ հիմնական ձևույթ + հայերենի (բարբառի) բառակազմական ձևույթ կաղապարով. օր.՝ արաբերենի գոյականներից և խոսվածքների *-ունք*, *-ուդ/օր*, *-ինա(°)/էնի*, *-իկ/ըզ*, *-ույթէն*, *-ի* վերջածանցներից կազմվել են պարզ ածանցավոր բառեր՝ °×-*ունք* «հորեղբայրենք» - #amm (հորեղբայր), *հ°ր°մ* - *ույթէն* «զոդություն» - ĕaršm (մեղք), *մըշմըշ-ին°/էնի* «ծիրանենի» - miāmiā (ծիրան), *Ղու°-իկ/ըզ* (ծնագունդ կամ ձնագնդիկ) - qubba (փոքր գմբեթ) - qubba, *սըր°-ի/ըզ* - sš"ida (տիկին), *ըուպ-ուպ* «ռուպոտ» (աման) - rubb (մրգահյութ, մութաբա) և այլն:

4. Արաբերենից փոխառյալ բառապաշարում բավական քիչ են այնպիսի բառերը, որոնք ենթարկվել են խնդրո առարկա խոսվածքներին հատուկ բառաբարդման օրինաչափություններին: Նշենք դրանցից մի քանիսը. *էլկէմուն*

(փոխառյալ հիմնական ձևույթ (էՇէկ «անասունի կեր») + հայերենի հիմնական ձևույթ (էմուն «աման»)), սըլՕըրըզ «սև կատվիկ» (հայերենի հիմնական ձևույթ (սըլ/սիվ (սև)) + արաբերենից փոխառյալ հիմնական ձևույթ (qaā «կատու») + հայերենի բառակազմական ձևույթ (-ըզ), բանփիզ «հետույքը երևացող՝ բաց» (bš^m «երևացող, ակնհայտ», aÊz «հետույք») (արաբերենից փոխառյալ հիմնական ձևույթ + արաբերենից փոխառյալ հիմնական ձևույթ):

Հայերենի վերոնշյալ բարբառային միավորներում առկա են նաև արաբերենից կատարված փոխառյալ բառերի բառիմաստային փոփոխություններ: Մասնավորապես, բառիմաստի նեղացում, օր.[՝] qabr բառն արաբերենում նշանակում է «գերեզման» ընդհանրապես, մինչդեռ Քեսաբի խոսվածքում նրա իմաստը մասնավորեցվել է՝ իսբըր «մահմեդականի գերեզման», °âըբ բառը կիրառվում է «ծվածեղ՝ ռուպով» իմաստով: Այն արաբերենից փոխառված uja բառի հայերեն բարբառային տարբերակն է, այն տարբերությամբ, որ փոխատու լեզվում բառն ունի «ծվածեղ» իմաստն ընդհանրապես և այլն: Հանդիպում են նաև բառիմաստի ընդլայնմամբ կիրառվող փոխառյալ բառեր: Օր.[՝] âyâšn բառը նշանակում է «սատանա, դև, հրեշ»: Քեսաբի խոսվածքում այն հիշյալ իմաստից բացի, ստացել է այլ իմաստ՝ շյթան «1.դև, 2.ծուկ» և այլն:

Մի խումբ բառեր առհասարակ նոր իմաստ են ձեռք բերել: Այսպես՝ °լ°մ «մարդկություն» - #šlam «աշխարհ», թլմու «կաթնեղենի տեսակ» - âulma «փոքր հաց, հացիկ», թուփա «ծովաստղ» - tâÊš «ցինկ», մահանու «պատրվակ» - miÊna «փորձություն, փորձանք, վիշտ» և այլն:

Արաբերենից փոխառված մի շարք բառեր, հատկապես այնպիսիք, որոնց նշանակությունն արտահայտվել է նկարագրական եղանակով՝ բառակապակցության միջոցով, վերցված լինելով խոսքի շղթայից, փոխառու լեզվում արտահայտվել են ոչ ամբողջությամբ. բառակապակցության մի մասը սղվել է: Օր.[՝] թավլա բառն ունի «նարդի» իմաստը, մինչդեռ âšwila արաբերենում նշանակում է «սեղան», իսկ «նարդի» իմաստն արտահայտվում է la#ba aâ-âšwila («սեղանի խաղ») բառակապակցությամբ և այլն:

Երրորդ ենթազխում (Փոխառությունները ըստ գործառական նշանակության և իմաստային-թեմատիկ խմբերի) փոխառություններն ըստ գործառական նշանակության տարբերակվում են նոր հասկացություններ նշանակող կողերի և ծանոթ հասկացությունների, այսպես կոչված, տարբերակային կողերի: Առաջին դեպքում դրանք, լինելով այլ լեզվին, մշակույթին, կրոնին, քաղաքակրթությանն առնչվող հասկացություններ և երևույթներ, թեև ներթափանցում են լեզվի (բարբառի) մեջ, բայց այդ համակարգի լիարժեք տարրեր չեն դառնում: Այդօրինակ փոխառություններ են հետևյալ բառերը՝ բղվի «բեղվին» - badawÊ «1.բեղվինական, 2.բեղվին», մշղհ «ամբողջ մարմինը ծածկող արաբական վերարկու» - muâlaÊ «թիկնոց,

վերարկոս», *Ղրբօշ* «ղրուշ (դրամի տեսակ)» - qirà, *յարաբ* «ո՛վ Աստված» - yš rabb, *շ՛էխ* «շեխ» - àayx «1.ծերունի, 2.շեխ, ցեղի առաջնորդ» և այլն: Երկրորդ դեպքում փոխառությունների մյուս տեսակը ևս նշված տարածքի հայերեն խոսվածքների համապատասխան բառերի չի փոխարինում: Այդ բառերն այլ բառերի կողքին գործառում են որպես ծանոթ հասկացությունների տարբերակային կոդեր: Դրանք բոլորովին նոր չեն տվյալ հանրության համար, նրանց հասկացական համարժեքներն առկա են այդ լեզվում, սակայն այդ բառերն իմաստային այնպիսի նրբերանգներ ունեն, որոնք համապատասխանում են տվյալ լեզվամտածողությանը: Օր.՝ *Նաբրը* «մահմեդականի գերեզման» - qabr (բրբ.՝ *qabr qadōn* «գերեզման»), *հերում* «անմաքուր» - Ēaršm «մեղք» (բրբ.՝ *šēḥal* «մեղք») և այլն:

Արաբերենից փոխառված բառերն իմաստային-թեմատիկ խմբերում դասակարգելուց պարզվում է, որ առավել ընդգրկուն են հետևյալ խմբերը.

1. *Ուրեյիք և ըմպեյիք, կերակրի պատրաստում և ամանեղեն*. օր.՝ *շուրբու* «ջրիկ, տաք կերակուր» - àarba, *ֆուլ* «խաշած բակլայով եփված արաբական ազգային կերակուր» - fāl «ունդ, բակլա», *հ՞վլու* «հալվա» - Ēalwšʻu «1.քաղցրեղեն, 2.հրուշակեղեն, հալվա», *շրբ՞թ* «օշարակ» - àarbšt, *Նախլու* «1.սուրճ, 2.սրճարան» - qahwa, *խաբիա* «կարաս» - xšb#a և այլն:

2. *Հագուստ, անձնական զարդարանք և խնամք*. օր.՝ *մուշիխ/մ՞շիհ* «ամբողջ մարմինը ծածկող արաբական վերարկոս», *ջո՛հ* «լայն վերնազգեստ» - jubh, *ա՞ու* «հովվական թիկնոց» - #abšʻ «բրոյա հագուստ, վերարկոս», *տակա* «գլխի ծածկոց, ֆես» - àšqĒa, *ազըլ* «բեդվինի գլխաշոր» - #iqšl և այլն:

3. *Երկրագործություն, բուսականություն*. օր.՝ *նասէր* «մատղաշ ծառ» - našb «բույս, տնկի», *խիշէլ* «ծառի կեղև» - qiàr «կեղև, կլեպ», *գէ՛խ* «շերամ պահելու գետնահարկ շենք» - kâx «խրճիթ», *խո՞՞զ* «մոլոշ, ուտելու խոտ» - xubbaza «վայրի մոլոշ, փիփերթ», *զանբալ* «շուշան ծաղիկ» - zabaq, *խօխ* «մանր սալորի տեսակ» - xaux «սալոր», *ժվա* «արմավ» - #ajãa «ճզմած արմավ, խուրմա» և այլն:

4. *Ունեցվածք, սեփականություն և առևտուր*. օր.՝ *մըլք* «ունեցվածք» - mulk, *մր՞ու* «ժառանգություն» - miršʻ, *նալդի* «առձեռն» - naqdĒ, *մուշղ՞րու* «հաճախորդ» - muàatarin «գնորդ», *ս՞լֆ* «կանխիկ» - salaf և այլն:

5. *Զգացմունք, խառնվածքային, բարոյական և գեղագիտական ըմբռնումներ*. օր.՝ *շր* «փորձանք, չարիք» - àarr, *բէլա* «փորձանք» - balšʻ, *Օ՞հըր* «սուգ, վիշտ» - qahra, *ջ՞սուր* «քաջ, խիզախ» - jasâr, *մ՞շուր* «անվանի» - maàhâr, *շր՞ֆ* «պատիվ» - àaraf, *Ի՞խբ* «անբարոյական (կին)» - qaĒba և այլն:

6. *Տարածքային, հասարակական և քաղաքական բաժանումներ, հասարակական հարաբերություններ*. օր.՝ *սուլթան* «սուլթան» - sulãšn «սուլթան, կառավարիչ», *շ՛էխ* «շեխ» - àayx «1.ծերունի, 2.առաջնորդ», *մուխարա* «գյուղապետ» - muxtšr «տանուտեր, ավագ (գյուղի)», *մոդըր* «կառավարիչ» - mudĒr «1.կառավարիչ, տնօրեն, 2.ռեկտոր», *մեջըլու* «ժողով» - majlis և այլն:

7. *Օրենք*. օր.՝մօխք՝մու «դատարան» - maÈkama, *Իադա* «դատավոր» - qŞ'in, *հր՝մու* «գող» - ÈarŞmÈ, *հո՛ւ* «փրավունք» - Èaqq, *շահադ* «վկա» - àŞhid, *ջ՛սուս* «լրտես» - jŞsàs, *ջէՇահ* «դահիճ» - jallad, *բարթէլ* «կաշառք» - barâÈl և այլն:

8. *Կրոն և նախապաշարմունք*. օր.՝*զօն* «մոլլայի աղոթքը» - "aiŞn «աղոթքի կանչ, կոչ», *մուՇա* «մահմեդական կրոնավոր՝ մոլլա» - maula «1.տեր, 2.մոլլա», *ջօմի/օ* «մզկիթ» - jŞmi# «մզկիթ, ուրբաթօրյա աղոթքի վայր», *ջին* «ոգի, սատանա, աժդահա» - jinn / jinna (հվք.) «ջիններ, հոգիներ, դևեր», *յարաբ* «ո՛վ Աստված, Տե՛ր իմ» - yŞ rabb «ո՛վ Տեր», *իշաՇա* «երանի» - "in àŞ" "allah «երես Տերը կամենա» և այլն:

Ատենախոսությունն ավարտվում է հետազոտության արդյունքներն ընդհանրացնող եզրակացություններով.

Անտիոքի բարբառախմբի տարածքային տարբերակներում արաբերենի ազդեցության դրսևորումներն արտահայտվել են հնչյունական և հատկապես բառապաշարային մակարդակներում՝ փոխառությունների միջոցով:

1. Արաբական փոխառությունները հիմնականում կատարվել են Անտիոքի հայերեն բարբառային միավորներում հպական բաղաձայնների տեղաշարժ-տեղափոխությունից հետո, քանի որ այդ բառերում արաբերենի հնչյունների ձայնաբանական հատկանիշները (ձայնեղ, խուլ, շնչեղ խուլ) նշված հնչյունափոխությանը չեն ենթարկվել և արտահայտված են գրեթե նույնությամբ: Դրանք՝որպես հայերենի խնդրո առարկա բարբառային միավորների հնչյունական համակարգերի անդամներ, ենթարկվում են միայն բառում դիրքից կախված՝ տվյալ համակարգին բնորոշ փոխազդեցական հնչյունափոխության:

2. Արաբերենի այն բաղաձայն հնչյունները, որոնք հնչարտաբերական հատկանիշներով բավական մոտ կամ մեկ-երկու հատկանիշով նման գծեր են ցուցաբերում Անտիոքի բարբառախմբի բաղաձայններին, փոխառություններում նույնացել են վերջիններիս: Առաջին ենթախումբը ներառում են հպականները, շփականների մեծ մասն ու ձայնորոնները, իսկ երկրորդը՝ ի, ², È շփականներն ու ¹, ã, î, ß ուժգին արտասանությամբ (եմֆատիկ) բաղաձայնների շարքը:

3. Ուշագրավ է, որ արաբերենի q - ն (կաֆ) փոխառությունների միջոցով անցել է Անտիոքի բարբառային միավորներին և հանդիպում է բավական թվով փոխառյալ բառերում: Ավելին, օտար այս հնչյունը, ամրանալով Անտիոքի բարբառախմբի հնչյունական համակարգում, գործածվում է նաև հայերեն բառերում՝ փոխարինելով *կ*-ին (այսինքն՝ ինքնուրույն հնչույթ չէ):

4. Արաբերենի խուլ հպական համզան (") Անտիոքի բարբառախմբի փոխառություններում չի պահպանվել: Միջձայնավորային դիրքում դրա փոխարեն / կիսաձայնն է ի հայտ գալիս. սա, հավանաբար, " > / հնչյունափոխություն չէ, այլ համզայի անկումով պայմանավորված՝ ձայնավորների միջև առաջացած հորանջից խուսափելու նպատակով հնչյունի հավելում: Փոխատու լեզվի ձայնեղ շփական # (այն) -ը Քեսաբի խոսվածքում պահպանվել է միայն բառամիջում, իսկ Սվեդիայի խոսվածքում ենթարկվել է #

>7 հնչյունափոխության: Իսկ արաբերենի բաղաձայնական համակարգում կիրառվող տևական հնչյուններն Անտիոքի բարբառախմբի արաբական փոխառություններում պահպանվել են ոչ բոլոր դեպքերում: Վերոհիշյալ բարբառային միավորներին բնորոշ բաղաձայնների տևական արտասանությունը ևս արաբերենի հնչյունական հնարավոր ազդեցության դրսևորում է:

5. Արաբերենից փոխառյալ բառերում կարճ ձայնավորները վերոնշյալ բարբառային միավորներում հաճախ նույնությամբ պահպանվել են, իսկ երկար ձայնավորները վերածվել են կարճերի՝ առանց որակական փոփոխության:

Արաբերենի ձայնավորների դրսևորած հնչյունափոխությունները մասամբ հանգում են մայրենի լեզվի պատմական հնչյունափոխությանը, մասամբ էլ ենթարկվել են փոխառու լեզվում գործող հնչյունական օրենքներին: Վերջին բնորոշման ամենացայտուն արտահայտությունը բարբառների արևմտյան խմբակցության, այդ թվում նաև Անտիոքի բարբառախմբի ձայնավորային ենթահամակարգին հատուկ, բառում շեշտից կախված հնչյունափոխությունն է. շեշտակիր դիրքում տեղի է ունենում պարզ ձայնավորի երկբարբառացում, որն առկա է նաև արաբերենից փոխառյալ բառերում:

6. Հայերենի խնդրո առարկա տարածքային տարբերակների՝ արաբերենից փոխառված բառապաշարում խոսքիմասային պատկանելության առումով ամենաընդգրկունը գոյականն է, այնուհետև՝ բայն ու ածականը: Գործողության նշանակությունն արտահայտվում է հիմնականում պարզ բայերի միջոցով: Բայերի մի մասն էլ, հատկապես Քեսաբի խոսվածքում, համապատասխան իմաստներն արտահայտում է նկարագրական եղանակով՝ հիմնականում հարադիր բարդությունների կազմությամբ: Թվականական և դերանվանական ձևերից արձանագրված են մեկ-երկու բառային միավորներ: Սպասարկու խոսքի մասերը ևս ներկայացված են ընդամենը մի քանի փոխառյալ բառերով:

Արաբերենից փոխառված քերականական երևույթներ հայերենի հիշյալ բարբառային միավորներում չեն հանդիպում. փոխառությունները ենթարկվում են տվյալ խոսվածքում համապատասխան խոսքի մասին հատուկ թեքման օրինաչափություններին (կամ, համապատասխանաբար, չեն թեքվում):

7. Անտիոքի հայերեն բարբառային միավորներն արաբերենից բառարմատներ՝ որպես այդպիսիք, չեն փոխառել. դրանք արաբերեն բառեր են, որոնք հայերենի՝ խնդրո առարկա բարբառային միավորներում ընկալվում են որպես արմատներ կամ արմատական բառեր: Եթե անգամ արաբերեն բառն այս խոսվածքների բառապաշար է ներթափանցել խոսքի շրջայում ձեռք բերած ձևաբանական իր տարբեր արտահայտություններով, փոխառու լեզվում ընկալվում և գործառվում է որպես բառի ուղիղ ձև:

8. Արաբերենից փոխառված բառերի մի շերտ, դառնալով հիմնական բառապաշարի բաղկացուցիչ մաս, բնիկ բառերի նման ձևավորել է

բառակազմական կառույցներ: Մասնավորապես, փոխառյալ բառերով և խոսվածքներում գործածվող ածանցներով կազմվել են մի շարք նոր բառեր: Ինչպես արաբերենից փոխառված արմատներ, այնպես էլ ածանցներ հայերենի նշված տարածքային տարբերակներում, սակայն, չեն գործառու: Փոխառյալ բառապաշարում բավական քիչ են այնպիսի բառերը, որոնք ենթարկվել են խոսվածքներին հատուկ բառաբարդման օրինաչափություններին:

Ի տարբերություն անվանական կազմությունների՝ արաբերենից փոխառյալ բաղադրիչով բայական հարադիր կազմություններ վերոհիշյալ բարբառային միավորներին (մասնավորապես՝ Քեսաբի խոսվածքին) բնորոշ են:

9. Անտիոքի բարբառախմբի տարածքային տարբերակներում բառերի մի սովոր խումբ փոխառու լեզվում (բարբառում) կիրառվում է փոխատու լեզվում ունեցած նույն իմաստով, այսինքն՝ բառիմաստի պահպանմամբ: Փոխառյալ մի շարք բառեր էլ ենթարկվել են ոչ միայն հնչյունական, բառակազմական, այլ նաև բառիմաստային փոփոխությունների՝ բառիմաստի նեղացման, ընդլայնման: Բառիմաստի շրջմամբ կիրառվող փոխառյալ բառեր, սակայն, չեն հանդիպում:

10. Քեսաբի խոսվածքի բառապաշարն ընդգրկում է իմաստային-թեմատիկ բոլոր խմբերը: Ավեդիայի խոսվածքում արաբական փոխառություններ չկան օրենքին, կրոնին և նախապաշարմունքին, ռազմական գործին, տարածքային, հասարակական և քաղաքական բաժանումներին վերաբերող իմաստային խմբերում: Իսկ Բեյլանի բարբառային միավորում արձանագրված արաբերենից փոխառված բառերը սակավաթիվ են. այստեղ փոխառյալ բառերի մեծ մասը թուրքերեն է:

Իմաստային-թեմատիկ խմբերից առավել ընդգրկուն են երկրագործությանն ու բուսական աշխարհին, առևտրին, ուտելիքին և ըմպելիքին, հագուստին, օրենսդրական-իրավական, ինչպես նաև կրոնական հասկացություններին վերաբերող խմբերը: Մյուսներում ներառված փոխառությունները համեմատաբար սակավաթիվ են: Ամենաքիչ թվով արաբերենից փոխառյալ բառեր ընդգրկում են շարժմանը, մարմնի մասերին և մտածողությանը վերաբերող իմաստային-թեմատիկ խմբերը:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Արաբերեն իսլամաբանությունները Քեսաբի խոսվածքում, «Երիտասարդ լեզվաբանների հանրապետական գիտաժողովի զեկուցումներ», Երևան, 2011, էջ 84-90:
2. Արաբերենի բաղաձայնների արտացոլումը Անտիոքի հայերեն բարբառներում, «Ջահուկյանական ընթերցումներ», Երևան, 2013, էջ 199-206:

3. Արաբական փոխառությունների ձայնավորների արտացոլումը Անտիոքի հայերեն բարբառներում, «Երիտասարդ լեզվաբանների հանրապետական III գիտաժողովի զեկուցումներ», Երևան, 2013, էջ 84-92:

4. Անտիոքի հայերեն բարբառախմբի արաբական փոխառությունների ձևաիմաստային քննություն, «Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ», Երևան, 2014, էջ 120 -126:

МИКАЕЛЯН СОНА АРАЕВНА

ВЛИЯНИЕ АРАБСКОГО ЯЗЫКА НА АРМЯНСКИЕ ГОВОРЫ АНТИОХИИ

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.01 «Армянский язык».

Защита состоится 07.03.2016 года в 15⁰⁰ часов, на заседании специализированного совета 019 ВАК по лингвистике, действующего при Институте языка им. Г. Ачаряна НАН РА (адрес: 0015, г. Ереван, ул. Григора Лусаворича 15).

РЕЗЮМЕ

Территориальные варианты антиохийской, или крайней юго-западной диалектной группы западной группы армянских диалектов, – это научно описанные диалектные единицы армянского языка, зафиксированные в 20-м веке в провинции Антиохия исторической Сирии (ныне в составе Турции) и в Кесабе (современная Сирия). Более ранние научные описания этих диалектов, так же как и сведения об иноязычных заимствованиях в них, встречаются крайне редко. А между тем являющаяся носителем этих диалектов община, – одна из старейших в регионе. В отдельные исторические периоды доминирующее

положение здесь занимали разные народы, говорящие каждый на своем языке, тесное общение с которыми привело к проникновению в местные диалекты армянского значительного объема иноязычных, в частности, арабских заимствований.

Целью данной диссертации является системное исследование влияния арабского языка на вышеуказанную диалектную группу с применением сравнительно-типологического метода. В работе поставлены следующие задачи: описать проявления звуковой системы арабского языка на примере заимствований; провести морфолого-семантический анализ заимствований; классифицировать заимствования по семантико-тематическим группам; охарактеризовать их с применением общезыковедческого подхода.

Основные положения диссертации могут быть полезны при проведении всесторонних исследований наблюдаемых в армянских диалектах иноязычных проникновений.

Работа поможет выявить не только языковые, но и исторические, культурные и общественные связи между соседними народами, ввиду чего она представляет интерес для специалистов в области арменоведения в целом и армянского языкознания в частности.

Диссертация состоит из введения, двух глав, выводов, списка сокращений, списка литературы и приложения.

Во введении формулируются поставленные в работе вопросы, обосновывается актуальность темы, вкратце характеризуются армяно-сирийские исторические взаимосвязи и армяно-арабские языковые отношения.

В первой главе на примере заимствований всесторонне исследуются проявления звуковой системы арабского языка в армянских говорах Антиохии. Смычные и сонорные согласные арабского языка, эмфатические согласные, большая часть фрикативных отождествились с соответствующими либо с близкими по одному-двумя признакам согласными армянского языка. Заслуживает внимания использование арабского *q* в заимствованных и армянских словах. Гласные языка-источника в основном не подверглись

звукоизменению: долгие гласные трансформировались в краткие – без качественного изменения. Замеченные же примеры звукоизменения отчасти сводятся к произошедшим историческим звукоизменениям в самом арабском языке, и отчасти – к характерному для звуковой подсистемы рассматриваемой диалектной группы звукоизменению, диктуемому местом ударения в слове: под ударением происходит дифтонгизация простого гласного.

Во второй главе заимствованный из арабского словарный запас рассматривается с точки зрения лексико-семантической принадлежности: две самые большие группы составляют существительные и глаголы. Второстепенные части речи представлены скупо.

Словообразование чаще всего происходило путем присоединения к заимствованной корневой морфеме армянской словообразовательной морфемы. Путем словосложения образовано лишь небольшое количество слов.

Из семантико-тематических групп наиболее многочисленны следующие: “земледелие и растениеводство”, “еда и питье”, “одежда, личные вещи и уход”, “имущество, собственность и торговля”, “религия и предрасудки”.

SONA ARA MIKAYELYAN

THE INFLUENCE OF THE ARABIC LANGUAGE ON THE ARMENIAN PATOIS OF
ANTIOCH

Dissertation for the scientific degree of a candidate of philological sciences
on the speciality 10.02.01 “The Armenian Language”

The defense of the thesis will be held on 07.03.2016 at 15⁰⁰, at the
session of Specialized Council on Linguistics 019 HAC (Higher Attestation
Commission) in the Institute of Linguistics after Hr. Acharyan of the National
Academy of Sciences, RA.

(address: 0015, Yerevan, Grigor Lusavorich str. 15).

SUMMARY

The territorial varieties of the Antiochian, or the southwesternmost dialect cluster of the western group of Armenian dialects, are the scientifically described dialectal units of Armenian, recorded in the 20th century in the Province of Antioch of historical Syria (presently part of Turkey), and in the town of Kesab (in present-day Syria). Earlier scientific descriptions or information about borrowings from foreign languages in said dialects are quite a rare occurrence. Meanwhile, this community, which is the native speaker of the dialects at issue, is one of the oldest in

the region. At certain historical periods, different peoples, speaking each their own language, dominated here; close communications with them resulted in penetration of a considerable amount of foreign borrowings, Arabic in particular, into the local dialects of Armenian.

The goal of this dissertation is to conduct a systemic study of the influences of the Arabic language on the dialect group in question with the use of the comparative-typological method. The tasks set in the work are as follows: a) to describe the evidences of the Arabic sound system, exemplified by borrowings; b) to conduct morphological-semantic analysis of the borrowings; c) to classify the borrowings into semantic-thematic groups; d) to characterize the latter with a general linguistics approach.

The key provisions of the dissertation can contribute to comprehensive researches of foreign intrusions into the dialects of the Armenian language.

The work will help identify not only linguistic, but also historical, cultural and social ties between the neighboring peoples, thereby it is of interest for researchers in the field of Armenian studies in general, and of Armenian linguistics in particular.

The dissertation consists of an introduction, two chapters, conclusions, a list of abbreviations, a reference list, and an appendix.

The *Introduction* gives a general outline of the issues elucidated in the dissertation, substantiates the relevance of the theme, as well as provides a brief insight into the Armeno-Syrian historical bonds and Armeno-Arab linguistic relations.

Chapter One comprehensively investigates the manifestations of the Arabic sound system in the Armenian patois of Antioch. The occlusive and sonorant consonants of Arabic, the emphatic consonants and most of the fricatives had identified with their respective ones or those approximating by one or two features. The use of the Arabic letter *q* in the borrowed and Armenian words is worth

attention. The vowels of the source language most often did not undergo sound changes: long vowels transformed into short ones without quality change. The observed instances of sound changes partly come down to historical changes in the Arabic language proper, and partly – to sound changes, typical for the sound subsystem of the dialectal group at issue, dictated by the stress in the word: in stressed syllables, simple vowels turned into diphthongs.

In *Chapter Two*, the lexicon, borrowed from the Arabic language, is analyzed from the viewpoint of lexical-semantic belonging: nouns and verbs make the two biggest groups, while the secondary parts of speech are scarcely represented. Word-formation mainly happened by way of adding an Armenian word-building morpheme to the borrowed stem. Very few words are formed by compounding. The most numerous of the semantic-thematic groups are: “agriculture and plant growing”, “food and drink”, “clothes, personal effects and care”, “property, goods and trade”, “religion and prejudice”.